ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐԱՅԻ 28. 08. 2019թ.
1 ՆԻՍՏՈՒՄ ՀՖԿՍՊԻ ՌԵԿՏՈՐ Վ.Ք. ԱՌԱՔԵԼՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ, ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ՝ 27.08.2019թվականի դրությամբ)

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտե հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) ուսանողների ուսման վարձավճարների գանձման, սահմանված չափի պահպանման, փոփոխման, վերադարձման և վերահաշվարկի մասին կարգը (այսուհետ՝ Կարգ) կարգավորում է ինստիտուտում ուսման վճարների հետ կապված բոլոր գործողությունները և հարաբերությունները:

2. Սույն Կարգի մշակման և ընդունման համար հիմք են ընդունվել «Կրթության մասինե, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասինե ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի դրույթները:

3. Վճարովի ուսումնառության պայմաններում սովորողները պարտավոր են վճարել Ուսման վարձավճարը պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի, ըստ կուրսերի:

4. Ուսման վարձը ուսանողները, դիմումի համաձայն, կարող են վճարել ըստ կիսամյակների կամ ուսումնական տարվա ամիսների՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը: Յուրաքանչյուր տարվա ամսական վարձավճարի չափը սահմանվում է ռեկտորատի որոշմամբ՝ գլխավոր հաշվապահի ներկայացմամբ:

5.Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ուսման վարձի ամսական վճարման դեպքում, ուսանողի կողմից տվյալ ամսվա վարձը չվճարելու պարագայում, ուսանողը պարտավորվում է հաջորդ ամիս վճարել ինչպես տվյալ ամսվա ուսման վարձը, այնպես էլ նախորդ ամսվա ուսման վարձի պարտքը:

6. Ուսման վարձը կայուն է ուսանողի ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար՝ պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի, ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում: Ինստիտուտից հեռացված և այնուհետև սահմանված կարգով վերականգնված ուսանողների հետ կնքվում է նոր պայմանագիր և ուսման վարձը մուծում են նոր պայմանագրով նախատեսված չափով և կարգով:

7. Վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման, բացառությամբ ուսանողի փոխատեղման (վճարովի համակարգից պետպատվերի համակարգ) և առողջական վիճակի պատճառով (համապատասխան բժշկական փաստաթղթի առկայության պարագայում) ուսումն ընդհատելու դեպքերի: Վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամկետին:

8. Ուսման վարձը մուծվում է փոխանցման կարգով՝ Ինստիտուտին սպասարկող բանկում բացված հաշվարկային հաշվին (ՀԷԲ Մյասնիկյանի մասնաճյուղ Հ/Հ

163038103145 կամ Արարատբանկ ԲԲԸ Իզմիրլյան մասնաճյուղ Հ/Հ 1510022984960100):

9. Զինվորական ծառայության մեկնելու կապակցությամբ կամ տարկետման պատճառով ուսումն ընդհատելու և հետաքայում սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնելու դեպքում ուսման վարձը մուծվում է սույն պայմանագրով նախատեսված չափով:

10. Գերազանց առաջադիմության արդյունքում անվճար ուսուցման համակարգ փոխատեղվելու արդյունքում Ուսանողի հետ կնքվում է նոր՝ համապատասխան պայմանագիր՝ դադարեցնելով սույն պայմանագրի գործողությունը:

11. Ինստիտուտի ուսանողները կարող են օգտվել ուսման վարձի լրիվ կամ մասամբ փոխհատուցման իրավունքից, ստանալ պետական կամ անվանական կրթաթոշակներ՝ համաձայն՝ ''Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ' հիմնադրամի ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման կարգ'-ի և ''Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ' հիմնադրամի անվանական կրթաթոշակների հատկացման կարգ''-ի: Ուսման վարձի փոխհատուցման իրավունքից օգտվելու համար, ուսանողները պարտավոր են վճարել ուսման վարձավճարի փոխհատուցված մասի ողջ գումարը:

12.Անհարգելի պատճառներով (անբավարար գնահատական կամ չստուգված ստանալու) կամ անհարգելի պատճառով քննությանը կամ ստուարքին չներկայանալու դեպքերում ակադեմիական պարտքերի մարման շրջանում քննություններ կամ ստուգարքներ հանձնած ուսանողները չեն օգտվում ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման իրավունքից:

Առկա ուսուցման համակարգի առաջին կուրսում հրամանագրման ներկայացվածները ուսման վարձավճարը մուծում են մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ը, իսկ հեռակա ուսուցման համակարգի առաջին կուրսում հրամանագրման ներկայացվածները ուսման վարձավճարը մուծում են մինչև տվյալ ուսումնական տարվա նոյեմբերի 15-ը:

13. Եթե ուսանողը չի կատարում ուսումնական պլանները, ցուցաբերում է ակադեմիական անբավարար առաջադիմություն, ժամանակին չի վճարում ուսման վարձավճարը, խախտում է ուսումնական գործընթացի ժամանակացույցը և Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները, ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող է ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև Ինստիտուտից հեռացվելը:

14. Ուսանողի կողմից վճարված ուսման վարձավճարը ուսանողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի և համապատասխան հիմնավորման համաձայն ենթակա է վերադարձման, եթե՝

1) ուսանողն ազատվում է ինստիտուտից համաձայն իր դիմումի,
2) վճարված գումարի չափը ավելին է տվյալ մասնագիտության համար սահմանված վարձավճարի չափից,
3) առողջական վիճակի պատճառով ուսանողը ձևակերպում է տարկետում,

4) տեղի է ունեցել ուսանողի կարգավիճակի փոխատեղում (ռոտացիա), ինչի արդյունքում վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողը տեղափոխվել է անվճար ուսումնառության համակարգ և մինչ այդ նախապես վճարել էր ուսման վարձավճարը:

15. Կազմակերպությունների կողմից ավելի վճարված ուսման վարձավճարը կարող է վերադարձվել նույն կազմակերպության կողմից նման պահանջ ներկայացնելու դեպքում՝ փոխանցման կարգով:

16. Եթե Կարգով սահմանված դեպքերում և կարգով վճարված ուսման վարձավճարը հետ չի վերադարձվել, ապա ուսանողական իրավունքները վերականգնելիս նույն կիսամյակի համար վճարվան ենթակա գումարից հանվում է նախկինում վճարված գումարի համապատասխան մասնաբաժինը այն ուսանողների դեպքում, ովքեր՝

1) բանակից զորացրվելուց հետո սահմանված ժամկետում ինստիտուտ դիմում են ներկայացրել իրենց ուսանողական իրավունքները վերականգնելու խնդրանքով,
2) վերադարձել են սահմանված կարգով ձևակերպված տարկետումից,
3) ինստիտուտից ազատվել են իրենց դիմումի համաձան:

Սույն կետի 1-ին ենթակետում նախատեսված դեպքերում և կարգով, ուսանողական իրավունքները վերականգնելիս ուսանողի համար պահպանվում է ինստիտուտ ընդունվելու պահին սահմանված ուսման վարձավճարի չափը, բացառությամբ սույն Կարգի 9-րդ կետով սահմանված դեպքերի:

Սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նախատեսված դեպքերում և կարգով, ուսանողական իրավունքները վերականգնելիս ուսանողի համար պահպանվում է ինստիտուտ ընդունվելու պահին սահմանված ուսման վարձավճարի չափը, եթե ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելու դիմումը ներկայացրել է ինստիտուտից ազատվելու օրվանից հետո երեք տարվա ընթացքում:

17. Ընդունելության մրցույթի արդյունքում վճարովի ուսուցման համակարգ ընդունված և մինչև բանակ զորակոչվելը ուսման վարձավճարը վճարած ուսանողները զորացրվելուց հետո պահպանում են ընդունելության ուսումնական տարում տվյալ մասնագիտության առաջին կուրսի համար սահմանված վարձավճարի չափը վճարելու իրավունքը, եթե ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելու դիմումը ներկայացրել է ինստիտուտում սահմանված ժամկետներում:

Կցագրվածների՝ ընդունելության մրցույթի արդյունքում վճարովի ուսուցման համակարգ ընդունված և մինչև բանակ զորակոչվելը ուսման վարձավճարը չվճարած ուսանողների, զորացրվելուց հետո վերջիններիս ուսման վարձավճարը սահմանվում է ընթացիկ տարում տվյալ մասնագիտության առաջին կուրսի համար սահմանված վարձավճարի չափով:

18. Զինվորական ծառայության մեկնելու կապակցությամբ կամ տարկետման պատճառով ուսումն ընդհատելու և հետագայում սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնելու դեպքում ուսման վարձավճարը մուծվում է գործող պայմանագրով նախատեսված չափով:

19. Սույն Կարգի փոփոխությունները և լրացումները ընդունվում են ինստիտուտի ռեկտորատի որոշմամբ:

20. Սույն փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2019թվականի սեպտեմբերի 02-ին: